ՀԱՄԼԵՏ ԼԵՆՍԵՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, *Ե., Փրինթինֆո, 2008, 406 էջ:*

Խաչքարերի վերաբերյալ բազմաթիվ աշխատություններ են գրվել: Հ. Պետրոսյանն իր աշխատությամբ փորձում է անդրադառնալ ինչպես խաչքարերի պատմությանը, այնպես էլ դրանց զարդարանքներին ու խորհրդանշական իմաստին: Հեղինակի հիսկայածավալ աշխատանքի շնորհիվ լրացվել է նաև այդ արվեստին վերաբերող մատենագիտության բացը: Եթե նույնիսկ խաչքարերի պատկերների (մոտ 300) և տեղադրության վայրերի (մոտ 100) թիվը համեմատաբար շատ չէ գոյություն ունեցող ամբողջության համեմատ, այնուամենայնիվ, հեղինակը, որոշ հղումներ կատարելով պատմական Հայաստանին, ջանացել է ընդգրկել այսօրվա Հայաստանի պատմական ու աշխարհագրական դաշտը: Առաջաբանի հենց սկզբից հեղինակը բնորոշում է խաչքարը՝ որպես բացօթյա, կողմնորոշած կոթող, որի արևմտյան երեսը կազմված է կենտրոնում քանդակված խաչից, որն ուղեկցվում է բուսական, երկրաչափական նախշերով, երբեմն էլ թռչունների, կենդանիների և մարդկային պատկերներով: Մեզ թվում է, որ սահմանումը նեղ է, քանի որ դրանում չեն ներառվում ոչ շինությունների մեջ ագուցված, ոչ էլ ժայռերի վրա քանդակված խաչքարերը: Վերջիններս բնորոշելու համար հեղինակը ներմուծել է «խաչքարային հորինվածք» հասկացությունը:

Առաջին գլուխը վերաբերում է վաղ միջնադարյան Հայաստանում խաչքարերի ծագմանը նախորդող խաչի պաշտամունքին: Մատենագիտական տեսակետից շատ հիմնավոր փաստարկելով և մեջբերելով այդ ժամանակաշրջանի եկեղեցական ժողովներին վերաբերող բազմաթիվ նյութեր՝ հեղինակը ներկայացնում է, թե ինչպես են մեգալիթները վերածվում կոթողների և հետո խաչքարերի: Ինչ վերաբերում է V դ. հայոց եկեղեցու պաշտոնապես ներմուծած խաչի պաշտամունքին, ապա նա զուգահեռ է անցկացնում VII դարից ի վեր բյուզանդական աշխարհում ծագած սրբապատկերների պաշտամունքի հետ և եզրակացնում՝ խաչի պաշտամունքը Հայաստանում ծագել է սրբապատկերների պաշտամունքը խոչընդոտելու համար: Սակայն Հ. Պետրոսյանը չի տալիս հետևյալ հարցի պատասխանը. եթե խաչի պաշտամունքը Հայաստանում շատ վաղ է ձևավորվել, ապա ինչո՞ւ չեն պահպանվել այդ ժամանակաշրջանի խաչքարեր, իսկ հնագույները թվագրվում են միայն X դարով:

Երկրորդ գլուխը նվիրված է խաչքարերի պատմական, տիպաբանական ու պատկերագրական վերլուծությանը: Հենց սկզբից հեղինակն ասում է, որ պետք է բավարարվել հակիրճ վերլուծությամբ, քանի որ վերլուծությունն ինքնին կարող է դառնալ շատ կարևոր և ինքնուրույն ուսումնասիրության նյութ (էջ 90): Նա մոտավորապես հետևում է Ազարյանի, Յակոբսոնի, Շահինյանի «պատմական» տիպաբանությանը, սակայն այդ դասակարգումը, մեր կարծիքով, բավական բնորոշիչ չէ: Տարբեր դպրոցների ուսումնասիրությունը, ինչպես ծրագրել էր Ժ. Մ. Թյերին, առավել հետաքրքրքական կլիներ:

Հեղինակի կարծիքով՝ XII-XIV դարերն այս արվեստի ծաղկման շրջանն էին (էջ 180): Սակայն հեղինակը հպանցիկ է անդրադառնում թևավոր խաչերին (էջ 183) ու Ամենափրկչի (էջ 184-185) տիպի խաչքարերին: Դրանք իսկապե՞ս քիչ են: Եթե այո, ապա ո՞րն է պատճառը՝ աստվածաբանակա՞ն, թե՞ ուրիշ:

Կցանկանայինք ուշադրություն հրավիրել այդ խաչքարերի զարդարանքներում հաճախ հայտնվող երկու տարրերի վրա: Խոսքը քիվի ու հիմքի պատկերային նախշերի մասին է: Հ. Պետրոսյանը քննադատում է (էջ 230-231) որոշ քիվերին հայտնվող «գազանի» վերաբերյալ Կորխմազյանի մեկնաբանությունը: Ըստ Կորխմազյանի՝ դա պետք է որ Հովհաննու Հայտնության գազանը լինի (Հովհաննու Հայտնություն 13:2.15), որը հակասում է այլ մասնագետների տեսակետներին. Ա. Այվազյանը պնդում է, որ դա սֆինքսն է, իսկ Ժ. Մ. Թյերին հակված է այն մտքին, որ դա գրիֆոնն է: Ըստ մեր հեղինակի՝ դա քառակերպի այլ պատկերումն է: Այնուհետև (էջ 232) նա կարծիք է հայտնում, որ որոշ խաչքարերի ստորին մասում պատկերված հեծյալը մարմնավորում է ենջեցյալին, ինչպես ընդունված էր պատկերել տապանաքարերին՝ այդպիսով հակառակվելով Ա. Այվազյանի տեսակետին: Վերջինս կարծում է, որ դա Սուրբ Գևորգն է: Իսկ մենք կարծում ենք՝ հանձին այդ հեծյալի, պետք է տեսնել Հովհաննու Հայտնության առաջին ձիավորին, քանի որ նա նետ ու աղեղ է կրում (Հովհաննու Հայտնություն, 6:2), իսկ թևավոր, առյուծագլուխ, ձիամարմին, իսկ պոչի ծայրին օձի գլուխ ունեցող «գազանը» կարող է լինել Հովհաննու Հայտնության 9:7-10 կամ 9:17-19 տներում նկարագրված «գազանը»: Այսպիսով, մենք հակված ենք ավելի շուտ այն վարկածին, որ դա Հովհաննու Հայտնությունից է: Այս վարկածը գլխավորապես հիմնված է այն փաստի վրա, որ խաչքարը «ի յառաջագունէ» կարող է հղում կատարել միայն հոգևոր ասպարեզին և հարության թեմային:

Ինչպես տեսնում ենք, զարդարանքների վերլուծությունը «փշոտ» հարց է, և ուրույն պատասխաններ տալ, հիմնվելով մի քանի խաչքարերի ուսումնասիրության վրա՝ ճշգրիտ լուծում չէ: Խոսքն ավելի ծավալուն խնդրի մասին է, որը ներառում է ուսումնասիրության երեք ոլորտ: Դրանք են՝ (ա) խաչքար - տապանաքար ճյուղավորումը/տարբերակումը, բ) զարդարանքների աստվածաշնչյան (Գիրք Ծննդոց, Ավետարաններ, Հովհաննու Հայտնություն) և ոչ աստվածաշնչյան աղբյուրների դասակարգումը, գ) քանդակագործի և վանականների գիտելիքները: Ավելի ծավալուն ժողովածուի վրա աշխատանքը մեզ հնարավորություն կընձեռեր դիտարկելու առավել ընդհանրական մեկնաբանություններ, և հետևաբար կկարողանայինք ուսումնասիրել տեղական ոճերի տարբերությունները: Սակայն առկա տվյալները բավարար չափով ամբողջական չեն և մեզ հնարավորություն չեն տալիս բանավիճելու:

Երրորդ գլխում Հ. Պետրոսյանն անդրադառնում է (էջ 234) խաչքարերի կիրառմանն ու կառուցմանը՝ շատ հետաքրքիր նկարագրելով ոչ նախշազարդային երկրորդական այնպիսի տարրեր, ինչպիսիք են տեղաշարժելու համար խաչքարի կողերին արված «բռնակները»: Նա նկարագրում է նաև քանդակելու տեխնիկան (էջ 238) ու խաչքարերը ներկելու համար օգտագործվող ներկերը: Ի տարբերություն այլ հեղինակների (Շահինյան, Բարխուդարյան)՝ Հ. Պետրոսյանը հետաքրքիր տարբերակում է դնում խաչքարի կանգնեցման նպատակի և առիթի միջև: Նպատակները շատ չեն (օգնություն, պաշտպանություն, հիշատակ, հաղթանակ, բարեխոսություն), իսկ առիթները բազմաթիվ էին (շինարարություն, հասարակական գործունեություն, ռազմական, ընտանեկան, կրոնական և այլ իրադարձություններ):

Չորրորդ գլուխը նվիրված է զարդարանքների տարրերի նկարագրությանը: Հեղինակը մանրակրկիտ վերլուծում է խաչքարը կազմող տարրերը, սակայն պատվանդանը կամ լուսանցքները քիչ են նկարագրված, թեև դրանք ուսումնասիրության շատ հետաքրքիր ասպարեզ են: Այս գլխում հեղինակը դարձյալ անդրադառնում է ծեսին և խորհրդանշական իմաստին (էջ 266-268): Եթե ներքևի զարդարանքները (էջ 277)՝ աստիճանները, եռանկյունին, խորհրդանշում են Գողգոթան, ապա հեղինակը կարծում է, որ խաչի տակի վարդյակը կարող է խորհրդանշել երկիրը կամ երկրային Գողգոթան (էջ 281) կամ էլ սեղանը: Այս վերջին մեկնաբանության կապակցությամբ, մեզ թվում է, որ հեղինակը բավարար բացատրություն չի տալիս: Հ. Պետրոսյանը մեզ համար բացահայտում է այդտեղ գտնվող թռչուններին ու օձերին: Նա հակված է այդ խորհրդանիշի մենիմաստության մեկնաբանության կողմը (այսինքն՝ միայն «Կենաց ծառի պաշտպան» նշանակությունը), որը մեզ նեղ է թվում. աստվածաշնչյան հղումներին հիշատակություններ չկան (դևի մարմնավորումը Ծննդոց գրքում, Մովսեսի բրոնզե օձը, Ահարոնի գավազանը):

Հինգերորդ գլխում բացատրվում է խաչքարերի կապը եկեղեցիների, ձեռագրերի ու տապանաքարերի հետ: Հ. Պետրոսյանը կարծում է, որ խաչքարերը որոշակի դեր ունեին ուխտագնացություններում (էջ 320) և որպես ուղեցույց էին ծառայում վանքերն այցելող ուխտավորների համար: Նույնիսկ եթե այս տեսությունը գայթակղիչ է, այնուամենայնիվ, մեզ թվում է, որ լավ կլիներ այն ճշգրտել ավելի շատ օրինակներով՝ հենվելով քարտեզագրության վրա: Այն աղերսը, որը, ըստ նրա, առկա է խաչքարի և ձեռագրի «էջի» միջև, համոզիչ չէ, նույնիսկ այն դեպքում, երբ մենք նույնական արձանագրություններ ենք հայտնաբերում խաչքարերի վրա ու ձեռագրերի հիշատակարաններում (էջ 339): Համեմատությունը տապանաքարերի հետ, որոնք նյութականացնում են «խզումը» երկրային կյանքի հետ, հետաքրքրական է: Ափսոս որ Հ. Պետրոսյանն ընդամենը ուրվագծել է հոգևոր-աշխարհիկ զարդարանքների այս ճյուղավորում տարբերակումը: Դա կարելի էր ցույց տալ խաչքարերի և տապանաքարերի համեմատական ուսումնասիրությամբ:

Վեցերորդ գլուխը նվիրված է տարբեր հորինվածքների (գծեր ու անվերջության պատրանք, «համաչափություններ», ուղղահայաց «շարժում», որթ, խաչ, հարության այլաբանություն, կենաց ծառ ու խաչքար՝ որպես հայկական ինքնության խորհրդանիշներ) խորհրդանշական նշանակությանը: Բոլոր այս դիտարկումները հետաքրքրական են, սակայն մեզ բավարար հավաստի չեն թվում՝ հաշվի առնելով ուսումնասիրված խաչքարերի անբավարար քանակը: Աշխատությունը ավարտվում է լավատեսական տրամադրությամբ (էջ 377): Խաչքարը, որը միջնադարում խորհրդանշում էր հաղթանակն ու հարությունը, աստիճանաբար փոխակերպվեց մահը խորհրդանշող տապանաքարային արվեստի: Այսօր այդ արվեստը վերածնվում և կարծես թե վերադառնում է ակունքներին:

Եզրափակելով ասենք, որ այս աշխատության ընդգրկումը բավականաչափ լայն է ամբողջական խաչքարի արվեստին նվիրված նախորդ աշխատությունների համեմատությամբ: Ակնհայտ է, որ այս գրքի էջերին բացահայտորեն հայտնվող խորհրդանիշների բազմիմաստությունը միգուցե խաչքարերի հիմնարար հատկանիշներից է: Հեղինակի տրամադրած տեղեկությունները բավարար հիմք են, սակայն որոշ անորոշությունը փարատելու համար դեռ մեծածավալ աշխատանք կա կատարելու:

Հոյակապ դիտարկումներ կան արձանագրությունների վերաբերյալ (էջ 230)՝ չնայած վիմագրության մասին լեզվաբանական կառուցվածքային ուսումնասիրության բացակայությանը: Աշխատությունը ուշագրավ է նախշազարդերը նկարագրելու համար

օգտագործված տերմինաբանության առումով, բազմաթիվ հղումներով, որոնք որոշ դեպքերում հիմնավորում են բացատրություններն ու քննարկված խնդիրները: Գրքի արժանիքներից մեկն էլ այն է, որ այն տրամադրում է հայ միջնադարյան հեղինակների առատ մատենագիտություն՝ հնարավորություն ընձեռելով ճշգրիտ պատկերացում կազմելու խաչի պաշտամունքի վերաբերյալ:

Հ. Պետրոսյանը որդեգրել է ավանդական մոտեցում. մի խաչքար է վերցնում որևէ բազմությունից և ոչ թե վիճակագրական խմբից (մաթեմատիկայի առումով): Այն մանրամասնորեն նկարագրվում է բազմաթիվ էջերի վրա, իսկ հետո ընդհանրացվում է խաչքարերի ամբողջության համար: Ուստի այդ մոտեցումն ունի ինդուկտիվ մեթոդի սահմանափակումները. ցանկացած ընդհանրացում կարող է աղճատված կամ չափազանցված լինել:

Հ. Պետրոսյանի աշխատանքը կարևոր ուսումնասիրություն է հայկական արվեստի ինքնատիպությունը հասկանալու համար: Հեղինակին հաջողվել է հիմնավոր տեղեկություններ մատուցել ուսումնասիրողներին և միաժամանակ ընթերցողին ճշգրիտ տեղեկություններ հաղորդել հայկական մշակույթի տարբեր կողմերի վերաբերյալ:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ. Բ.
Ֆրանսիա, Փարիզ